եւ ընդ վերիվայր տարածմանց բազկաց և սրընթաց քայլափոխմանցն ոտից՝ հանդերձքն պսպղուն սփռեալ յաջ եւ յահեակ վառմամբ տարածէր իբրեւ զդրօշս խելից նաւուց ովկիանական ծովընթացիցն, որք զխելս ընդ նոյն սփռեալ վառվռէին։ Եւ ընդ ճառագայթ արփենւոյն խիտ առ խիտ սօսայր որպէս զմարգարիտս՝ հանդերձքն կերպասեղէնք նետ զնետիւ հարեալ հողածնաց դիպողաց։ Եւ ի քայլափոխութեանց հոտոտէր բուրմունքն որ յանձանց եւ ի ծաղկանց զարմազանից գեղաւորաց ի վայրն կանաչորակ ծաղկանց ծիրանեաց եւ դեղնեաց եւ երկրագունիցն եւ մանուշակորաց եւ սպիտակաց երփն երփն յօրինուածոց յօրինեալ ի Ցօրինողէն։ Ցարեւնման զանազան կերպարանաց իւրոց, որք իւրաքանչիւր ոք յատակակի ունէին զգեղ դիմաց սրտաքարշից, որպէս եւ բուրումն էր օրինակ զանազան ծաղկանցն բուրմանց, եւ տեսիլքն զանազան։ Զայս մինչդեռ անդրէն գրէի՝ եկին հասին ի վերայ իմ քահանայք եւ ոմանք տեղւոյս՝ ասեն. Վա՜յ մեզ, զի ի կատականս քո եղաք այսօր. որոց պատասխանէի թէ Գրածն իմ ոչ է վասն նոցա։ Այլ նոքա իմացեալք աղաչէին զխօսիլն իմ։ Ասացի. Պախտ էր ինձ եթէ պատահեալ իսկ լինէի իբրեւ յերազի՝ քան թէ ի նոր տեսիլս ըմբռնեալ ի տոռունս նոր իմն վէր ի վերայ սպից հնացելոց։ Այս ինձ դիպուած պատահեալ հասանիլ ի տեղիս եւ ի սոյն աւուրս, զի ցուցանէին զյօրինուած արհեստին իւրեանց, զի գրէի յիշատակութիւն Պոնտացոց, քաղաքաւ եւ ազգաւ վաճառականք՝ առ ի մատուցանել զգեղ կերպարանին իւրեանց եւ քարշեալ ի մէջն զխելս յեղակարծ պատահողաց ընդ յինքեանս։ Վա՜յ դստերացն Թրակացւոց որք յարկում արգելեալք՝ յակամայ եւ առ ահի բռնակալաց չունին }յետղ ինչ զի ծախել կարիցեն զորս եւ ունին։ Այլ ընդ կաքաւս ոչ զարմացայ այնքան՝ քան